ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի փետրվարի 26-ից մարտի 1-ը

Իտալիայի Հանրապետություն (ք.Հռոմ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Դավիթ Անանյան

Միքայել Փաշայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իտալիայի Հանրապետություն, ք.Հռոմ, փետրվարի 26-ից մարտի 1-ը

4. Հրավիրող կողմը՝

Իտալիայի եկամուտների գործակալություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) և Իտալիայի եկամուտների գործակալության (ԻԵԳ) ներկայացուցիչների միջև երկկողմ հանդիպումների մասնակցությունը: Հանդիպումները նվիրված էին ՀՀ ՊԵԿ և ԻԵԳ-ի համագործակցությանը՝ մասնավորապես <<Հարկային տեսուչներ առանց սահմանների>> (Tax inspectors without borders – TIWB) ծրագրի շրջանակներում, ինչը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) և ՏՀԶԿ-ի (OECD) կողմից համատեղ իրականացվող նախաձեռնություն է՝ ուղղված աջակցելու զարգացող երկրների հարկային համակարգերի զարգացմանը: Վերջինս հնարավորություն է ընձեռում հարկային հսկողության գործիքների կիրառման միջազգային լավագույն փորձ ունեցող հարկային մասնագետներին ներգրավել զարգացող երկրներում իրականացվող ստուգումների կամ հարկային հսկողության իրականացման գործընթացին: Սա նման ձևաչափով առաջին հանդիպումն էր երկու կողմերի միջև:

6. Քննարկված թեմաները

Այցի ընթացքում քննարկվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Իտալիայի եկամուտների գործակալության համագործակցությանը վերաբերող հարցեր, մասնավորապես՝ «Հարկային տեսուչներ առանց սահմանների» ծրագրի իրականացման շրջանակներում: Ավելի մասնրամասն անդրադարձ է կատարվել ծրագրի իրականացման գործում ԻԵԳ-ի դերակատարությանը:

ԻԵԳ-ի կողմից ներկայացվել է իրենց համակարգը, ինչպես նաև իրենց կողմից հարկային հանցագործությունների, հարկերից խուսափման համար կիրառելի սխեմաների բացահայտմանն ու դրանց հաղթահարմանն ուղղված միջոցները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՊԵԿ նախագահը հանդիպել է ԻԵԳ ղեկավարին: Հանդիպման ընթացքում կողմերը հայտնել են իրենց պատրաստակամությունը համագործակցել ոչ միայն «Հարկային տեսուչներ առանց սահմանների» ծրագրի շրջանակներում, այլև փոխադարձաբար կազմակերպել փորձի փոխանակում նաև այլ ուղղություններով:

ՊԵԿ պատվիրակությունը մասնակցել է նաև մեկնարկված «Հարկային տեսուչներ առանց սահմանների քրեական հետաքննություն» պիլոտային ծրագրին առնչվող մի շարք առանցքային հարցերի քննարկմանը:

Առանձին հանդիպում է կայացել ՊԵԿ նախագահի տեղակալ Միքայել Փաշայանի և Իտալիայի եկամուտների գործակալության ղեկավարի տեղակալ Պաոլո Բարբանտինի միջև, որի շրջանակներում Իտալիայի գործընկերներին են ներկայացվել կոմիտեում գործող էլեկտրոնային կառավարման համակարգերը և նախատեսվող ծրագրերը: Հանդիպման ընթացքում ՊԵԿ-ի և Իտալիայի եկամուտների գործակալության միջև հաստատել է հաջորդող 18 ամիսների համագործակցության աշխատանքային ծրագիրը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՊԵԿ Նախագահ Դավիթ Անանյանը և ԻԵԳ ղեկավար Անտոնիո Մաջորեն ստորագրել են ծրագիրը Հայաստանում մեկնարկելու Մտադրությունների մասին հայտարարություն: Իտալական կողմը այն ներկայացրել է ՏՀԶԿ քարտուղարություն, ինչն էլ հիմք է հանդիսացել ծրագրի պաշտոնական մեկնարկի համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

«Հարկային տեսուչներ առանց սահմանների» ծրագրի գործարկման համար ՊԵԿ-ը կկազմի աշխատաքային խումբ, որն իր գործունեությունը կծավալի առաջնորդվելով ներկա պահին մշակման փուլում գտնվող աշխատանքային ծրագրով:

Ընդունող կողմը պատրաստակամություն է հայտնել աջակցել ՊԵԿ-ին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հարկային ծառայությունների ֆորումին անդամակցելու հարցում:

Ս.թ. մայիս ամսին Իտալիայի եկամուտների գործակալության ղեկավար Անտոնիո Մաջորեի գլխավորած պատվիրակությունը կայցելի Հայաստան՝ ծանոթանալու մեր երկրի հարկային ոլորտում գործող էլեկտրոնային համակարգերի սպասարկման, վերլուծական և հսկողական գործընթացներին, ինչպես նաև մեծ տվյալների («Big Data») վերլուծության գործիքի կիրառմանը: Այցի շրջանակում նախատեսվում է ստորագրել ընդլայնված Փոխըմբռնման հուշագիր՝ հարկային ոլորտում բազմակողմանի համագործակցության վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը



06.03.2019թ.